ԲՅՈՒԶԱՆԴԱԴԻՏԱԿԱՆ IX ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

1971 թ. մայիսի 11—13 Երևանում կայացավ բյուզանդագիտական իններորդ համամիութենական նստաշրջանը:

Հայաստանի պատմությունը (ներառյալ Փիլիկյան Հայաստանը) դժվար է ուսումնասիրել Բյուզանդիայի պատմությունից անկախ, որովհետև բազմերանգ ու բազմաբնույթ են հայ-բյուզանդական հաղորդական, մշակութային, գիտական ու դավանական առնչակցությունները: Ուստի, նստաշրջանի անցկացումը Երևանում միանգամայն բնականոն էր:

Նշանակալի է, որ նստաշրջանին մասնակցում էին գրեթե բոլոր բյուզանդագիտական կենտրոնների՝ Մոսկվա, Լենինգրադ, Վոլգոգրադ, Երևան, Թբիլիսի, Բաքու, Սվերդլովսկ և շատ այլ քաղաքների ներկայացուցիչներ:

Նստաշրջանի ընթացքում կայացավ երկու պլենար նիստ (մայիսի 11-ին և 13-ին), իսկ բուն աշխատանքը բաժանված էր չորս մասնաբաժնի՝ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՕԺԱՆԴԱԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ: Նստաշրջանի մասնակիցները քննարկեցին մի շարք կարևոր բյուզանդագիտական խնդիրներ: Կենտրոնական խնդիրներից մեկը ստրկատիրությունից ավատատիրության անցման և վերջինիս ձևավորման հարցն էր Բյուզանդիայում ու նրա հարևան երկրներում: Առաջին պլենար նիստը ամբողջությամբ նվիրված էր այս խնդիրների քննությանը: Զ. Վ. ՈՒԴԱԼՑՈՎԱՆ (Մոսկվա) զեկուցեց «Ավատատիրության ծագման խնդիրը Բյուզանդիայում» թեմայով: Նա առանձնացրեց ու բնութագրեց երեք հիմնական կարգ. նշելով միաժամանակ, որ Բյուզանդիայում ավատատիրությունը կազմավորվում էր զորեղ կենտրոնացած պետության առկայության պայմաններում, երբ «ազատ» հողագործները ենթարկվում էին պետական ճորտացման: Բյուզանդական ավատատիրության կարևորագույն առանձնահատկություններից մեկը (Եվրոպայի այլ երկրների համեմատությամբ) խոշոր քաղաքների պահպանումն էր իբրև առևտրի ու արհեստագործության կենտրոն:

Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆԸ (Երևան) իր զեկուցումը նվիրեց «Հայաստանի ավատականացումը և Բյուզանդիան» թեմային: Անցման հիմնական շրջանները նշզրտելուց հետո, զեկուցողը նշեց, որ ստրկատիրությունից ավատատիրության անցումը առավել արագընթաց էր կատարվում հելլենիստական այն երկրներում, որոնք, հունամակեդոնական տիրողներին վտարելով, հիմնել էին սեփական պետականություն (Հայաստան, Իրան), մինչդեռ հռոմեական զավռոների վերածված երկրներում (Եգիպտոս, Ասորիք, Փոքր Ասիա) անցումը դանդաղ էր կատարվում: Ս. Տ. Երեմյանը դռնում է, որ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև Հայաստանը բաժանելու տարեթիվը (387) միաժամանակ երկրի՝ մինչավատատիրական և ավատատիրական զարգացման սահմանագիծն է: Նա այնուհետև հանգամանորեն խոսեց նախարարական տների, շինականության, քաղաքական պատմության ու առևտրի մասին: IV—VIII դդ. համարվում են վաղ ավատատիրական հարաբերությունների շրջան, երբ դասակարգային պայքարը արտահայտվում է զանազան աղանդավորական վարդապետությունների միջոցով:

Մ. Յա. ՍՅՈՒԶՈՒՄՈՎԸ (Սվերդլովսկ) զեկուցեց «Մինչավատատիրական շրջանը Բյուզանդիայում և Արևմուտքում» թեմայով: Նա կարծում է, որ Հռոմեական կայսրության տարածքի պայմաններում, ուր զարգացումը ուղղակի կամ անուղղակիորեն պայմանավորված էր անտիկ քաղաքակրթության ազդեցությամբ, գոյացավ այնպիսի իրադրություն, որ «մինչավատատիրական շրջանը բնականոն էր՝ հասարակարգի ավատականացման անցման գործում», ըստ որում՝ «մինչավատատիրական շրջանը» ոչ ստրկատիրական էր և ոչ ավատատիրական, այլ՝ asuigeneris.

Բյուզանդիայում X—XI դդ. ագրարային խնդրի ուսումնասիրությանն էր վերաբերում Գ. Գ. ԼԻՏԱՎՐԻՆԻ զեկուցումը (Մոսկվա): Անդրադառնալով «ամայացած հողերի» նկատմամբ պետության որոշ միջոցառումներին, նա բնութագրեց դրանք և միաժամանակ արծարծեց մասնակի «վերանորոգման» փորձերը, որոնք ևս թելադրված էին կենտրոնական ու տեղական աստիճանավորների կամքով ու շահերով: Սոցիալ-տնտեսական հարցեր արծարծեց նաև Վ. Վ. ԿՈՒԶՄԱՆ (Վոլգոգրադ): IX—X դդ. աղբյուրների ուսումնասիրմամբ նա աշխատում էր նշագրտել բյուզանդական տնտեսության վինակը՝

պատերազմական գործողությունների ընթացքում: Սա արդարև նոր հարցադրում է: Նույնքան նոր ու ուշագրավ էր Վ. Դ. ԿՈՐՈԼՅՈՒԿԻ (Մոսկվա) զեկուցումը՝ «Այսպես կոչված կոնտակտային շրջանի հարցի շուրջ՝ վաղ միջնադարյան Կենտրոնական և Հարավ-արևելյան Եվրոպայում»: Նա հիմնականում հենվում է անտիկ շրջանի էթնիկական ենթակազմության և նյութական մշակույթի տեղաբաշխման վրա. մասնավորապես շեշտելով Բյուզանդիայի անմիջական ազդեցությունը: Նա զանում է, որ արվյալ շրջանի առանձնահատկությունը պայմանավորված է երեք մշակութային-տնտեսական տիպերի փոխազդեցությամբ (եկվոր ֆոչվորական, տեղական հովվային, տեղական ու դրսեկ (սլավոնական, հողագործական):

Գ. Ն. ԼԵԲԵԴԵՎԱՆ (Լենինգրադ) ճնշության էր առել վաղբյուզանդական օրենսդրության ստուգնների տերմինաբանության ստուգիանական զարգացման հարցը: Նա մի շարք հետաքրքրական դիտարկումներ է անում՝ կապված IV—VI դդ. ստրկության բնույթի ու աղբյուրների փոփոխության հետ:

Մի շարք զեկուցումներ նվիրված էին բյուզանդական քաղաքի պատմության խնդրին, որ հաջողությամբ ուսումնասիրում են սովետական բյուզանդագետները: Ի. Ֆ. ՖԻՍՄԱՆԸ (Լենինգրադ) զեկուցեց իր երկարատև ուսումնասիրությունների արդյունքների մասին՝ բյուզանդական շրջանի եգիպտական քաղաք Օքսիրինխի սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ: Զլինելով արհեստագործական ու առևտրական խոշոր կենտրոն, այս քաղաքը միաժամանակ ունեցել է արտադրության բոլոր ճյուղերը, գյուղատնտեսականի գերակշռությամբ՝ հենված իրավաբանորեն ազատ աշխատավորի մանր արդյունաբերության եղանակի վրա: Սույն օրինակը, զեկուցողի եզրակացմամբ, կարող է օգնել եգիպտական քաղաքների մեծ մասի կառուցվածքի ու օրինաչափությունների բացահայտմանը: Մինչդեռ Գ. Լ. ԳՈՒՐԲԱՏՈՎԸ (Լենինգրադ) ճնշության էր առնում անտիկ շրջանի քաղաքի քայքայման հարցը IV—VII դդ. Բյուզանդիայում:

Մ. Մ. ՖՐԵՅԴԵՆԲԵՐԳԸ (Կալինին) «Դալմատական քաղաքը Բյուզանդական կայսրության կազմում IX—XI դդ.» զեկուցմամբ արծարծում էր Դալմատական քաղաքների հերթին կառավարման ու կառուցվածքի հետ կապված հարցեր: Նա նշում է, որ գոյություն են ունեցել մագիստրատուրաներ, թեև այդ շրջանում դեռ վաղաժամ է խոսել ազնվականական կոմունաների մասին:

Հաճելի նորույթ էր Կ. Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆԻ (Լենինգրադ—Երևան) զեկուցումը՝ «Բյուզանդական շրջանի Անիի տոպոնիմիկայի ուսումնասիրության շուրջը»: Հենվելով վիմագրական ու մատենագրական նյութերի համադրության վրա, նա հաջողությամբ որոշում է «Ներքին բերդի» տեղը, այն նույնացնելով կենդանի ավանդույթից հայտնի «Աղչկա բերդի» հետ:

Վերջին տարիներս մեզանում հանգամանորեն ուսումնասիրվում է Բյուզանդիայի հերդասային և դասակարգային կյանքը: Դրանում հատկապես մեծ է Ա. Պ. ԿԱԺԴԱՆԻ (Մոսկվա) երախտիքը, որը նստաշրջանի եզրափակիչ պլենար նիստում զեկուցեց «XI—XII դդ. Բյուզանդիայի իշխող դասակարգի կազմը» թեմայով: Աղբյուրների լայն ընդգրկումն ու նոր վերլուծությունը նրան հնարավորություն են տալիս նշելու իշխող գերդաստանների տեղն ու դերը, նրանց զբաղեցրած պաշտոնը, կշիռը և այլն: Հատկապես ուշագրավ են տեղի ունեցող վերուվայրումները, որոնցով կարելի է հետևել հասարակական կյանքի զարգացման ընթացքին: Այդ խնդրի առավել վաղ շրջանով զբաղվում է Ա. Ա. ԶԵԿԱԼՈՎԱՆ (Մոսկվա), որին և վերաբերում էր նրա զեկուցումը:

Վ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱՆ (Երևան) ընթերցանությունը նավ հայ քաղկեղոնականների դերն ու դիրքը բյուզանդական իշխող դասակարգի կազմում: Զեկուցումը վերաբերում էր XI դ. վերջի նշանավոր զորավար ու դիվանագետ Ֆիլարետ Վարաժնունու գործունեությանը, որը շուրջ 20 տարի փաստորեն տիրում էր Ասորիքի, Մեսոպոտամիայի ու Կիլիկիայի նշանակալի մասին՝ կայսրության հովանավորությամբ: Ֆիլարետի նակատագիրը բնորոշ է հայ-քաղկեդոնական միջավայրի այլ գործիչների համար ևս:

Բյուզանդիայի արտաքին քաղաքականությանն ու Արևելքի հետ նրա ունեցած հարաբերությունների ճնշությանն էին վերաբերում Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆԻ (Երևան) և Ռ. Ա. ՀՈՒՍԵՅՆՈՎԻ (Բաքու) զեկուցումները: Ա. Տեր-Ղևոնդյանը հանգամանորեն վերլուծեց Բյուզանդական կայսրության՝ արաբական խալիֆաթին սահմանակից գավառի հետ կապված անցուդարձերը (հերառյալ Կիլիկիան ու Փոքր Հայքը), իսկ Ռ. Հուսեյնովը խոսեց Բյուզանդիայի ու սելջուկների փոխհարաբերությունների մասին XI—XII դդ.: Հետաքրքրական էր նաև Ն. ԳՈՒԼԻԵՎԻ (Բաքու) զեկուցումը՝ «Կովկասյան Աղվանքի և Բյուզանդիայի առևտրական կապերի պատմությունից»:

Այս նստաշրջանում առաջին անգամ առանձին ճնշության առարկա դարձան իրավունքի պատմության խնդիրները: Ե. Է. ԼԻՊՇԻՑԸ (Լենինգրադ) զեկուցեց «Հուստինիանոսի 529 թ. որոշ սահմանադրությունների պատմության շուրջ» թեմայով: Նա հանգում է մի շարք

նոր եզրակացությունների, որոնք պարզաբանում են Հուստինիանոսի ու նրա գործակիցների իրավական գործունեությունը: Խ. ԹՈՐՈՍՅԱՆԸ անդրադարձավ Հունա-հռոմեական օրենսգրքին: Նրա կարծիքով, այդ երկի հունարեն սկզբնաղբյուրը գոյացել է հելլենիստական, բայց ազգային ինքնատիպությունը պաշտպանած միջավայրում, իսկ այդպիսի միջավայրը նա համարում է հայկական սատրապությունները:

Նստաշրջանի մասնակիցները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին գրականագիտության ու հասարակական մտքի մասնաճյուղի աշխատանքի նկատմամբ (նախագահ՝ Ա. Կուժդան, Կ. Յուզբաշյան): Այստեղ քննարկված հիմնական խնդիրներից մեկը անտիկ ժառանգության և բյուզանդական գրականության աղբերի ու սերտաճման հարցն էր, ինչպես նաև՝ բյուզանդական գրականության հուշարձանների գեղագիտական գնահատությունը: Ուշագրավ էր Տ. Ա. ՄԻԼԼԵՐԻ (Մոսկվա) զեկուցումը: Նա նշեց, որ Մեթոդիոսի երկախոսության գեղարվեստական ինքնատիպության ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում վերանայել եղած տեսակետները և հավաստել նրա ինքնատիպ գեղարվեստական եղանը: Ս. Ս. ԱՎԵՐԻՆՑԵՎԸ (Մոսկվա) վերլուծեց Ռոմանոս Քաղցրախոսի կոնդակներում առկա կառուցվածքային-ձևական երկրևեռությունը, դրա մեջ տեսնելով արտահայտչական ինքնատիպ հնարանք՝ պայմանավորված նրա պոետիկայով:

Նստաշրջանում արծարծվեց նաև բանաձյուսության օգտագործման խնդիրը բյուզանդական գրականության մեջ: Ս. Ֆ. ՊՈԼՅԱԿՈՎԱՆ (Լենինգրադ) բացահայտեց Ֆիլատետ Ոզորմածի վարքում եղած բանաձյուսական երանգները և եկավ այն եզրակացության, թե վարքագրական հուշարձաններ են թափանցել նաև երգիծական-զավեշտական բովանդակության բանաձյուսական երանգներ, երբեմն թերևս վարքագիրների բուն նպատակադրումից անկախ կամ աննկատ: Մասնաճյուղում քննարկված կարևոր խնդիրներից մեկը գրողի տեղն էր՝ հասարակության մեջ:

Յա. Ն. ԼՅՈՒԲԱՐՍԿԻՆ (Լենինգրադ) հանդես եկավ «Միխայել Փսելոսը ժամանակակիցների հարաբերություններում» զեկուցմամբ: Ի մասնավոր քննելով Փսելոսի և Քսիֆիլինի հարաբերությունները՝ Կոնստանդին Մոնոմախոսի պալատական շրջանում, զեկուցողը եզրակացնում էր, որ այն պայմանավորված էր «գիտական մրցակցությամբ»: Սակայն XI դ. 80-ական թվականներից Քսիֆիլինը սերտանում է եկեղեցական-ասկետական շրջանների հետ, որը առաջ է բերում Փսելոսի հետ ունեցած նրա հարաբերությունների փոփոխություն: Դրանով է պայմանավորված Փսելոսի քննադատությունը:

Նստաշրջանի մասնակիցները քննարկեցին նաև գրական հուշարձանների դերը՝ իրականության ուսումնասիրության գործում: Մ. Ա. ՊՈԼՅԱԿՈՎՍԿԱՅԱՆ (Սվերդլովսկ) անդրադարձավ ոչ պատմական հուշարձանների աղբյուրագիտական արժեքին՝ XIV դ. հարցեր քննելիս: Նույն կարգի հարց էր արծարծվում նաև Ն. Վ. ՍԻՆԻՑԻՆԱՅԻ (Մոսկվա) զեկուցման մեջ՝ «Առք Մաքսիմ Հույնի մասին երկը իբրև պատմական աղբյուր»:

Դրական աղբյուրի և իրականության հարաբերության ուսումնասիրությանն էր նվիրված Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆԻ (Երևան) զեկուցումը՝ «Դիգենիս Ակրիտասի մասին պոեմի ծագման ու ձևավորման ժամանակի խնդիրները», որ նատեական և հանգամանալից քննության նյութ է դարձրել: Հետաքրքրական զեկուցումներով հանդես եկան բյուզանդագետներ Ա. Ա. ՖՐԵՅԲԵՐԳԸ (Մոսկվա), Ն. Պ. ԶԵՄԲԱՏՈՎԱՆ (Մոսկվա) և այլք: Լ. Ս. ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ (Թբիլիսի) խոսեց «ս. Գեորգին նվիրված շարականների «լույսի» և «կրակի» այլաբանական նշանակության» մասին: Ըստ զեկուցողի դրույթի՝ հին վրացական շարականագրության տվյալներից դատելով՝ կարելի է եզրակացնել, որ վրաց քրիստոնեական իրականության մեջ Լուսնի հիմնական պաշտամունքը փոխարինվել է «Գեորգով»: Ուշագրավ դրույթներ կային Ս. Կ. ԿՐԱՍԱՎԻՆԱՅԻ (Կազան) և Վ. Ա. ՍՄԵՏԱՆԻՆԻ (Սվերդլովսկ) զեկուցումներում:

Բարդ ու բազմաբնույթ էին աղբյուրագիտության մասնաճյուղում քննարկված զեկուցումներն ու հարցերը (նախագահներ՝ Ս. Գ. Ղաուխչիշվիլի, Լ. Ս. Խաչիկյան, Պ. Մ. Մուրադյան, Յա. Ն. Շչապով): Այստեղ զեկուցումներ կարդացվեցին հունական, հայկական և ռուսական ձեռագրագիտության, կնքագիտության, բառարանագրության, դրամագիտության և այլ բնագավառների վերաբերյալ:

Զ. Գ. ՍԱՄՈՂՈՒՐՈՎԱՆ (Մոսկվա) և Յա. Ն. ՇՉԱՊՈՎԸ (Մոսկվա) իրենց զեկուցումները նվիրեցին հունական ձեռագրերի ուսումնասիրության պատմությանն ու նկարագրությանը: Սամոդուրովան պատմեց ՍՍՀՄ-ում եղած հունական ձեռագրական հավաքածուների, նրանց քարտագրման ու հրապարակման, իսկ Շչապովը՝ Լենինգրադի հնադարաններում պահվող ձեռագրերի ու դրանց գիտական արժեքի մասին: Վերջինս հատկապես կանգ առավ Վարշավայի ազգային գրադարանի մի քանի ձեռագրերի վրա, որոնք առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում (բյուզանդական հեղինակների երկերի XIV դ. ժողովածու, «Իլիականի»՝ XV դ. Կրետե կղզում կատարված ընդօրինակություն և

այլն): Բ. Լ. ՖՈՆԿԻՉԸ (Մոսկվա) ճանգամանքներն խոսեց Մահսիմ Հույնի իսկագիր ձեռագրերի մասին:

Անվանի բյուզանդագետ Ս. Գ. ՂԱՌԻԽՋԻՇՎԻԼԻՆ (Թբիլիսի) անհրամեշտ համարեց հանդես գալ բյուզանդական աղբյուրների գնահատությամբ՝ Անդրկովկասի պատմությունն ուսումնասիրելիս: Նա հատկապես արձանագրեց հայ-վրացական համատեղ պայքարի, երկու երկրների քրիստոնեացման և այլ էական իրադարձությունների վերաբերող տեղեկությունների առկայությունը: Բյուզանդական աղբյուրների ուսումնասիրությունը լրացնում է հայ և վրացի պատմիչների հաղորդումները:

Մասնաճյուղի քննարկած զեկուցումներից մի քանիսը վերաբերում էին բնագրի ու միջնադարյան բարգմանության համադրական ուսումնասիրությանը: Ա. Դ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ (Երևան) զեկուցեց «Անդրեաս Բյուզանդացու տոմարական բոլորակների ու աղյուսակների հայկական պատումները» թեմայով: Ձեռագրական աղբյուրների ուսումնասիրությունը նրան բերել է ուշագրավ եզրակացության. հայերենով պահպանվել է հույն տոմարագետի կարևոր աշխատություններից մեկը, հավանաբար IV դ. բարգմանված: Նա վկայակոչեց և այնպիսի աղբյուրներ, որոնք օգնում են պարզելու Անդրեաս Բյուզանդացու ինքնությունը: Ս. Պ. ԿԱՐՊՈՎԸ քննության էր առնում XII—XIV դդ. Տրապիզոնի մասին գրող բյուզանդական պատմիչների հասարակական-քաղաքական աշխարհայացքը, ցույց տալով նրա աստիճանական զարգացումը:

Զուտ աղբյուրագիտական-բնագրագիտական բնույթ ուներ Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ (Երևան) զեկուցումը («Ագաթանգեղոսի բնագրի քննության շուրջ»): Այլալեզու խմբագրությունների համադրությամբ և հնագույն պատառիկների վերծանությամբ հնարավոր է դառնում օտարել ընդմիջարկությունները և վերականգնել նախնական բնագիրը: Զեկուցողը վկայակոչեց քննության հիմնական աղբյուրները՝ կանխանշելով տարվելիք աշխատանքը:

Մասնաճյուղում լսվեց կնքագիտությանը վերաբերող երկու զեկուցում. Վ. Ս. ՇԱՆԴՐՈՎԱՍԿԱՅԱՆ (Լենինգրադ) հանգամանորեն խոսեց Էրմիտաժում պահվող XI—XII դդ. հայ գործիչների կնիքների մասին, նշտելով նրանց ինքնությունը և դերը՝ Բյուզանդիայում (Կոստանդին Թեոդորական, Թոռնիկ, Թորոս Ռուբինյան): Ի. Վ. ՍՈԿՈԼՈՎԱՆ (Լենինգրադ) հաղորդում կատարեց Խերսոնեսի կնիքների վերաբերյալ, իսկ Ա. ՌԱՋԱԲԼԻՆ (Բաքու) անդրադարձավ V—XII դդ. Ատրպատականում բյուզանդական դրամների շրջանառությանը: Հետաքրքրական էր նաև Լ. Ս. ՄԻՄԻՆՈՆՎԻԼԻ զեկուցումը, ուր խոսվում էր հույն-վրացերեն տեքստուալ բառարանի կազմության համար տարվող աշխատանքների մասին: Նույն մասնաճյուղում հանդես եկած Ն. Կ. ԹԱՀՄԻԶՅԱՆԸ (Երևան) արծարծեց հայ-բյուզանդական երաժշտության առնչություններին վերաբերող հարցեր: Սկզբնաղբյուրների քննությամբ նա ցույց տվեց, որ այդ առնչությունը երկկողմանի ու լայն բնույթ ունի, իսկ հայերն իրենց ներդրումն ունեն և բյուզանդական երաժշտության մեջ:

Նստաշրջանում զբաղվում էր նաև հարտարապետության և արվեստի պատմության մասնաճյուղ (նախագահներ՝ Բ. Ն. Առաքելյան, Ա. Վ. Բանկ, Տ. Ա. Իզմայլովա): Երեք զեկուցում նվիրված էր հարտարապետության պատմության հարցերին. Ա. Լ. ՅԱԿՈԲՍՈՆԸ (Լենինգրադ) քննության էր առնում IV—V դդ. հայ-ասորական հարտարապետական զուգահեռությունների հարցը: Նրա համոզմամբ՝ Հայաստանում ձևավորվել ու տեղայնացվել են ասորական հարտարապետության որոշ ձևեր ու գեղարվեստական ոճավորումներ: Իսկ Ա. Ի. ԿՈՄԻՉԸ (Մոսկվա) քննեց «Կոստանդնուպոլսի Սոֆիայի տաճարի հարտարապետական կառուցվածքի ինքնատիպությունները»: Ս. Խ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ (Երևան) իր զեկուցումը նվիրեց Տեկորի տաճարի բարձրաքանդակներին:

Սակայն մասնաճյուղի զեկուցումների գերակշիռ մասը վերաբերում էր արվեստի պատմությանը: Ա. Վ. ԲԱՆԿԸ (Լենինգրադ) զեկուցեց XIV դ. բյուզանդական գեղարվեստական արծաթի ինքնատիպությունների մասին: Հմուտ ոճական ու արվեստական վերլուծության շնորհիվ նա կարողանում է թվագրել այդ առարկաները՝ տևական ուսումնասիրության նյութ դարձնելով: Լ. ԱԶԱՐՅԱՆԸ (Երևան) խոսեց վաղ միջնադարյան հայ պատկերագրության և ի մասնավորի Դանիել Մարգարեի պատկերման մասին: Նրա կարծիքով՝ վերջինիս ընտրությունը պայմանավորված է տեղական ազատագրական մտայնությամբ:

Զեկուցումներից մի քանիսը վերաբերում էին բյուզանդական և հարևան երկրների արվեստների փոխազդեցությանը, առավելապես՝ բյուզանդականի ազդեցությանը: Այդ թեմային էին նվիրված Օ. Ս. ՊՈՊՈՎԱՅԻ (Մոսկվա), Գ. Ի. ՎԶԴՈՐՆՈՎԻ (Մոսկվա), Վ. Դ. ԼԻԽԱՉԵՎԱՅԻ (Լենինգրադ), Տ. Ա. ԻԶՄԱՅԼՈՎԱՅԻ (Լենինգրադ), Ա. Յա. ԿԱԿՈՎԿԻՆԻ (Մոսկվա), Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻ (Երևան) զեկուցումները: Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆԸ (Երևան) հանգամանորեն խոսեց IV—VII դդ. հայկական խնամկարների, նրանց կրած ազդեցության ու ունեցած ակունքների մասին:

Նստաշրջանի եզրափակմանը նախորդեցին

Կ. Ա. ՕՍԻՊՈՎԱՅԻ և Ռ. Ա. ՆԱՍԼԵԴՈՎԱՅԻ հաղորդումները: Առաջինը զեկույցով բյուզանդագետների Մոսկվայում կայացած XIII միջազգային հանդիպման ընթացքի ու արդյունքների մասին, իսկ վերջինը ամփոփեց «*Византийский Временник*» հանդեսի 1961—1971 թթ. պատմությունն ու նրանում արծարծված հարցերը:

Այնուհետև ելույթ ունեցավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական բաժանմունքի ակադեմիկոս Մարտիրոս Ս. Պ. Աղայանը՝ հանձնարարությամբ գիտությունների ակադեմիայի նախագահության: Նա բնդգծեց նստաշրջանում կարդացված զեկուցումների կարևորությունն ու այժմեականությունը բյուզանդագիտության հետագա զարգացման համար և նշեց, որ նստաշրջանը նրանում զումարելու միտքը ինքնին խրախուսելի է, քանի որ դրանով գիտնականներին հնարավորություն ընձեռվեց միմյանց հետ շրջվելու, գիտական հարցերի շուրջ կենդանի խոսակցություն բացելու համար: Ակադեմիկոս Մ. Պ. Աղայանը իր ելույթի վերջում նշեց, որ մեծ կարևորություն ունեցող գիտական խնդիրների բարձրացման ու մասսայականացման գործում որոշակի անելիքներ ունեն գիտական հանդեսները:

Նստաշրջանի աշխատանքն ամփոփող խոսքով հանդես եկավ Զ. Վ. Ուդալցովան: Նա արձանագրեց զեկուցումների բարձր գիտական մակարդակը, ընդգծված հարցերի ու խնդիրների կարևորությունը, միաժամանակ ուրախությամբ նշելով բյուզանդագետների շարքերի համալրումը երիտասարդ ու կարող մասնագետներով: Ելույթի վերջում նա շնորհակալության խոսք ասաց նստաշրջանի մասնակիցներին և մանավանդ նրա հրավիրմանը օժանդակած անձանց ու կազմակերպություններին, նշեց ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների պարբերականի՝ «Լրաբերի» դրական նախաձեռնությունը՝ բյուզանդագիտությանը հատկացնել ամսագրի հատուկ համար:

Վ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ